բել երկրին, զի չունի զօրս, անկարդութիւն բաղում ցաւ և նեղութիւն 'ի վերայ վանօրէից, զի յիւրաքանչիւր ուխտաւորէ ընդ այր և ընդ կին առնու 8 1/2 դահեկան եալ-տըզ ոսկի, այլ ոչ կարէ տանել և բերել զնոսա 'ի Ցոպզէ. վասն այսր տամք այլոյ ուրուք 3750 դահեկան և 2 դահեկան յ7 դահեկանէ՝ զոր առնու մաքսապետն յիւրաքանչիւր անձնէ։ Եւ ընակիչք Բեթղեհէմի թշնամութեամբ յերկուս բաժանեալ՝ արտաքսեցին զմիարանս երից վանաց, և ինքեանք ամրացան 'ի նոսա։

Եւ յաւուրս Զէթէֆի Ապտուլլահ Փաշայի, յորս Ցոյնք գժտեալ էին ընդ Լատինս, և քարտուղար քաղաքին ազգաւ Ցոյն՝ յաւելեալ էր 'ի տուրս Էսէտ Փաշայի 1000 դահեկան, եւ Լատինք ընկեցեալ էին զայն 'ի պաշտօնէ։ Եւ 'ի գալստեան Զէթէֆէնոյն յԵրուսաղէմ, լաւելեայն տուտարս առաքեաց առ նա, եդեալ 'ի վերայ 2000 ոսկի տրոցն Հայոց 3750 դահեկան եւս. առաւելագոյն բարդեաց և Լատինաց, Ցունաց 4 քսակ, զի թեւարկութեամբ նոցին հասեալ էր 'ի պաշտօնն։ Տուրքն Հայոց եհաս 12,100 դահեկան. զայս արար, մի՝ վասն վրէժխնդրութեան, և երկրորդ՝ յուսով հասանելոյ յառաջին պաշտօն իւր։

Իսկ այժմեան կուսակալն յառաջին գալստեան իւրում յղեաց զոմն առ Հայս թէ՝ Ցոյնք տուեալ 1000 ոսկի առին հրաման չինութեան, պարտին եւ Հայք առնել այնպէս, որ և արարին իսկ։ Եւ յերկրորդ գալստեանն վերըստին էառ զնոյն գումար. և 3000 դահեկան եւս յերից վանաց վարձ ոստիկանաց արձակելոյ 'ի Սիկիմայ պատրաստել վանօրէից զդրամս։ Նոյնպէս էառ և 'ի սոյն ամի, զի զոր սահմանեացն, արկ 'ի կարգս ընական տրոց։ Միայն 'ի Հայոց էառ 15,850 դահեկան, բաց 'ի Ջուխայէ մոմէ և այլ պէսպէս ընծայից, եւ տակաւին որոնէ հնարս հանելոյ զինչս 'ի նոցանէ։ Եւ յանիշխանութենէ գաւառին, սովորութիւն լեալ է շրջակայ գիւղական Արաբացւոց անկասկած կոտորել զմիմեանս, և աւարել զինչս, և սովորութիւն էր դատաւորաց տասանորդել զկապուտս աւարաց նոցին։ Գիւղականք Բեթղեհէմի 'ի գիշերի միում վարեցին 700 այծս 'ի թշնամեաց իւրեանց, և բաժանեցին յիւրեանս, իսկ քսուք ոմանք արք ապիրատք հասուցին զայն յուն-